Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❀ CONTENTS ❀ СОДЕРЖАНИЕ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արմեն Մարուքյան. Սևրի պայմանագիրը որպես պահանջատիրության իրավաքաղաքական հիմքերից մեկը.....9
Armen Marukyan. Treaty of Sevres as One of the Legal-Political Basis of Reparations
Армен Марукян. Севрский договор как одна из правовых и политических основ репараций

Սարգիս Բալդարյան. Միջերկրածովյան առևտուրն ու Հայրապետ Դի Մարտինի նամակները (նախնական դիտարկումներ) 25
Sargis Baldaryan. Mediterranean Trade and Hierapet Di Martin's Letters (Preliminary Remarks)
Саркис Балдарян. Торговля Средиземноморья и письма Айрапета Ди Мартина (предварительные замечания)

Անի Խաչատրյան. Թեքեյան մշակութային միության ԱՄՆ-ի և Կանադայի մասնաճյուղերի գործունեությունը 1980-ական թվականներին.....32
Ani Khachatryan. Activities of Branches of the Tekeyan Cultural Association in the United States and Canada in the 1980s.
Ани Хачатрян. Деятельность филиалов Культурной Ассоциации Текеян в США и в Канаде в 1980-х гг.

Միքայել Մալխասյան. Մեծ Հայքի թագավորության՝ Մոսքիկյան լեռներով ձգվող հյուսիսարևմտյան սահմանագծի խնդիրը (ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության»).....40
Mikayel Malkhasyan. The Problem of the North-Western Borderline of Greater Armenia along Moschikian Mountains (According to Claudius Ptolemy's "Geography")
Микаэл Малхасян. Проблема северо-западной пограничной линии Великой Армении вдоль Мосхикских Гор (по «Географии» Клавдия Птолемея)

Վահե Սարգսյան. Ջավախքի հիմնահարցը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (ըստ 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի) (Մաս 1).....54
Vahe Sarkisyan. The Main Issue of Javakhk according to the Perceptions of Georgian Socio-Political Thought (Based on Georgian Print Media in 1999-2009) (Part 1)
Ваэ Саркисян. Проблема Джавахка в оценке грузинской общественно-политической мысли (по материалам грузинских печатных изданий 1999-2009 гг.) (Часть 1)

Արեգ Քոչինյան. Տերմինուս ընտրախավերի տեսությունը ամերիկյան անցումային պատմակարգի համատեքստում.....70
Areg Kochinyan. Terminus Elite Theory in the Context of American Transition Formation
Арег Кочинян. Теория элит Терминус в контексте американской переходной формации

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Մագդա Արսենյան. ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները նեոքաղաքականության պայմաններում.....82
Magda Arsenyan. The Issues of Democratization of Parliamentary Culture of the Republic of Armenia in the Context of Neopolitics
Магда Арсенян. Проблемы демократизации парламентской культуры в контексте неополитики в РА

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄՆ-Ի ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ*

ՀՏԴ 94:008

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ,
Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anixach-94@mail.ru

Հոդվածի նպատակն է ներկայացնել և լուսաբանել Թեքեյան մշակութային միության իրականացրած գործունեությունն ԱՄՆ-ի ու Կանադայի հայկական համայնքներում 1980-ական թվականներին:

Մեր խնդիրն է պահպանված հարուստ արխիվային փաստաթղթերի, ժամանակին ծավալված նամակագրական տեղեկությունների և այլ նյութերի հիման վրա ուսումնասիրել Թեքեյան մշակութային միության գործունեության հիմնական ուղղությունները, հայապահպանության ուղղությամբ տարված աշխատանքները, մշակութային ու կրթական ձեռնարկները, ցույց տալ դրանց արդյունավետությունը և սփյուռքահայության կյանքում ունեցած նշանակությունը:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառել ենք արխիվային փաստաթղթերի, նամակների, ինչպես նաև այլ գիտական նյութերի համադրման, վերլուծության և պատմականության մեթոդները:

Ուսումնասիրելով թեման՝ եկել ենք այն եզրակացության, որ 1980-ական թվականներին Թեքեյան մշակութային միությունը հաջողությամբ իրականացնում էր իր վրա դրված առաքելությունը, այն է՝ ծառայել հայ ժողովրդին, ամերիկահայության ու կանադահայության շրջանում նպաստել հայ մշակույթի, լեզվի ու ազգային դիմագծի պահպանմանը:

Միությունն իր գործունեությամբ մեծապես նպաստում էր նաև հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանն ու ամրացմանը:

Հիմնաբառեր՝ *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե, հայրենիք-սփյուռք մշակութային փոխհարաբերություններ, Թեքեյան մշակութային միություն, Կանադա, Լոս Անջելես, հայրենիք, սփյուռք, հայապահպանություն:*

Թեքեյան մշակութային միությունը (այսուհետ՝ ԹՄՄ) հիմնվել է1947թ.-ին Բեյրութում Հրաչյա Սեդրակյանի, Բարունակ Թովմասյանի, Գերսամ Ահարոնյանի, Համբարձում Պերպերյանի, Հովսեփ Յոզղաթլյանի, Հայկաշեն Ուզունյանի և Հակոբ Դավիթյանի նախաձեռնությամբ: Միությունը ստացել է անվանումը՝ ի պատիվ արևմտահայ հայտնի բանաստեղծ Վահան Թեքեյանի: Միությունը գործում է Ռամկավար

* Հոդվածը ներկայացվել է 16.07.2020թ., գրախոսվել՝ 24.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

ազատական կուսակցության հովանավորությամբ: Միության գլխավոր նպատակն է պահպանել հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը, հիմնել դպրոցներ, ուսուցանել հայոց լեզու, հայոց պատմություն, գրականություն, կրոն, արվեստներ ու գիտություն, ինչպես նաև պատրաստել ազգային ու պետական գործիչներ և օժանդակել ուսանողներին, որոնք կնվիրվեն հայագիտությանը: ԹՄՄ-ին են անդամագրվել բազմաթիվ հայ գրողներ, արվեստագետներ, մշակութային գործիչներ, որոնք նյութական ու բարոյական օժանդակություն են բերել կազմակերպությանը, դպրոցներին, ուսուցիչներին, ուսանողներին, մշակութային գործիչներին՝ ստեղծելու տարատեսակ խմբեր, հրատարակելու գրական-գեղարվեստական ու գիտական գործեր:

ԹՄՄ-ն իր մասնաճյուղերն է հիմնել սփյուռքահայ հայաշատ համայնքներում, այդ թվում՝ Լիբանանի, Սիրիայի, Հորդանանի, Ավստրալիայի, Անգլիայի, Արգենտինայի, Կանադայի և ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում[70]:

Դեռևս 1968թ.-ին ԱՄՆ-ում, Լոս Անջելոսի հայ երիտասարդաց միության հիման վրա ստեղծվում է ԹՄՄ Ամերիկայի և Կանադայի մասնաճյուղերը, որոնք ունեին ընդհանուր ղեկավար մարմին, որը կոչվում էր Կենտրոնական վարչություն և գտնվում էր Բոստոնում: 1975թ.-ին Կանադայում սկսում է լույս տեսնել միության «Ապագա» շաբաթաթերթը, իսկ Մոնրեալ, Տորոնտո, Դետրոյտ և Մոնտեվիդեո քաղաքներում միությունը հիմնում է «Թեքեյանի ձայն» ռադիո և հեռուստաժամերը: Այդ է պատճառը, որ1980-ական թվականներին հատկապես մեծ ակտիվությամբ էին գործում ԹՄՄ Մոնրեալի, Բոստոնի, Լոս Անջելեսի, Դետրոյթի մասնաճյուղերը[71]:

ԹՄՄ-ն առ այսօր օգտվում է Հյուսիսային Ամերիկայի էջմիածնական առաջնորդարանի հովանավորությունից և հանդիսանում է Ռամկավար ազատական կուսակցության պատգամախոսը: Միության պատվո ատենապետն է Երվանդ Ազատյանը[72]:

1980-ական թթ.-ին Լոս Անջելեսի ԹՄՄ մասնաճյուղը ծավալում է հասարակական ու մշակութային լայն գործունեություն: Կազմում գործում էին կանանց, երիտասարդական, թատերական, երգի ու պարի հանձնախմբեր[73]: Ազգային մշակույթի նկատմամբ հայ երիտասարդների հետաքրքրությունն ու կապը պահելու նպատակով ԹՄՄ-ի Լոս Անջելոսի մասնաճյուղը 1980-ական թվականներին կազմակերպում է երգի, արվեստի և ասմունքի մրցույթներ, որոնց մասնակցել են Լուսինե Զաքարյանը, ֆրանսահայ երգչուհի Աստղիկ Դեդյանը, լիբանանահայ երգչուհի ժանեթ Իլանջանյանը ամերիկահայ դաշնակահար Գյուզելիմյանը և այլք: Միության թատերախումբը Լոս Անջելեսում ներկայացնում է մի շարք ներկայացումներ, այդ թվում՝ «Մուսա լեռան քառասուն օրը»:

ԱՄՆ համայնքում ԹՄՄ ջանքերով նշվում են Ե. Չարենցի ծննդյան 75, Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի 100, Հակոբ Պարոնյանի 125, Վահան Թեքեյանի ծննդյան 100-ամյակները, Անդրանիկ Անդրեասյանի հոբելյանը, կազմակերպվում է հուշ-երեկո նվիրված Վիլյամ Սարոյանին, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը[74], կազմակերպվում են սփյուռքահայ ու հայրենի նկարիչների գործերի մի շարք ցուցահանդեսներ: ԹՄՄ-ի Լոս Անջելոսի մասնաճյուղը լույս է ընծայում Լևոն Զավեն Սյուրմելյանի «Լույս զվարթ» հայերեն բանաստեղծությունների ժողովածուն, Վահան Թեքեյանի «Հատընտիր քերթվածների» ժողովածուն ու նամականին, Գերսամ Ահարոնյանի «Մեծ երազի ճամբուն վրա» վեպի անգլերեն թարգմանությունը: Միության

[70] Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 663:
[71] **Հայաստանի Ազգային Արխիվ** (այսուհետ ՀԱԱ), ֆ.875, ց. 15, գ. 220, թ. 43:
[72] **ՀԱԱ,** ֆ. 875, ց. 15, գ. 225 թ. 7:
[73] Նույն տեղում, թ.6:
[74] Նույն տեղում,թ. 4:

կողմից ԱՄՆ է հրավիրվում ճանաչված գրող Վարդգես Պետրոսյանը, որը հանդիպում է տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ[75]:

1980-ականներին ԹՄՄ կարևոր ձեռնարկումներից էր հայկական մեկօրյա և ամենօրյա դպրոցների հիմնումը Լոս Անջելեսում: 1981թ.-ին տեղի ունեցավ ամերիկահայ լավագույն ամենօրյա վարժարաններից մեկի բացումը, որը ստացավ բարերար Արշակ Տիգրանյանի անունը: Վերջինս դպրոցի կառուցման համար նվիրաբերել էր անհրաժեշտ հողամասի մեծագույն մասը[76]: Դպրոցի հիմնարկեքի արարողությունը կատարում է թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը[77]: Դպրոցի հիմնադրումը մեծ իրադարձություն էր ԱՄՆ հայ համայնքի կյանքում, որովհետև այն դարձավ ԱՄՆ-ի հայ համայնքի առաջնակարգ ուսումնական հաստատությունը:1980-ական թվականներին վարժարանն ուներ մոտ 180 աշակերտ[78]:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի արխիվում պահպանվել է Թեքեյան մշակութային միության Լոս Անջելեսի մասնաճյուղի հիմնադրման 15-ամյակին նվիրված գրքույկը[79], որում ներկայացված են միության ծավալած 15-ամյա գործունեության արդյունքները, ինչպես նաև տեղեկություններ կան տարբեր գործիչների՝ ԹՄՄ վերաբերյալ արտահայտած կարծիքների մասին[80]: Գրքույկում ներկայացվում է նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի կարծիքն այն մասին, որ «Թէքէեան Մշակութային Միութեան ընդարձակածաւալ գործունէութիւնը մի մեծ խորհուրդ եւս ունի. ամրապնդել ու խորացնել հայրենիք-սփյուռք կապերը, դրանով իսկ վառ պահել հայ ժողովրդի նուիրական երազները..... Մենք ըստ արժանւոյն ենք գնահատում ձեր Միութեան հայրենանուէր գործունէութիւնը եւ սրտանց հրճւում ձեր յաջողութիւններով»[81]:

Գրքույկից տեղեկանում ենք, որ 1980-1983 թթ.-ի ընթացքում միությունը իրականացրել է շուրջ 5 տասնյակի հասնող միջոցառումներ, որոնց շարքում նշանավոր էին ՀԲԸՄ ցուցասրահում 1980թ.-ի փետրվարի 6-10-ը Իսկո Լէփէճեանի լուսանկարչական, մարտի 6-15-ը նկարիչ Բյուզանդ Կոճամանյանի նկարչական[82], մարտի 16-18-ը խորհրդահայ նկարիչ Ռոբերտ Էլիբեկյանի գործերի ցուցահանդեսները, իսկ ապրիլի 11-18-ը իրականացվում է նկարչուհի Նորա Ազատյանի ցուցահանդեսը՝ «Իմ Հայաստան» խորագրով: Նոյեմբերի 9-ին Ուիլշըր Իպէլ սրահում հանդիսավորությամբ նշվում է մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի ծննդյան 100-ամյակը և կազմակերպվում գեղանկարների ցուցադրությունը: 1981թ.-ի հունվարի 16-ին Հայ Ավետարանական եկեղեցու սրահում տեղի է ունենում համերգ հայրենի արվեստագետներ Ջիվան Գասպարյանի, Բելլա Դարբինյանի և Վոլոդիա Աբաջյանի մասնակցությամբ: Հունվարի 30-ին Խորհրդային Հայաստանի ԳԱ անդամ, պրոֆ. Բաբկեն Առաքելյանը ներկայացնում է դասախոսություն՝ «Հայաստանի հնագիտական պեղումները» թեմայով[83]:

1981թ.-ի փետրվարի 13-ին տեղի ունեցավ ԹՄՄ-ի կազմակերպած հրապարակային ասուլիսը, որին Ասատուր Տեվլեթյանը, Օշին Քեշիշյանը և Լութֆի Թապագյանը ներկայացրին իրենց տպավորությունները հայրենիքում սփյուռքահայ

---

[75] Նույն տեղում, թ.5:

[76] **ՀԱԱ,** ֆ. 875, ց. 15, գ. 225,թ. 10:

[77] Խմբագրական, Յյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմ., «Էջմիածին»1980, ԺԱ., էջ 35-36:

[78] **ՀԱԱ,** ֆ. 875, ց. 15, գ. 225,թ. 10:

[79] Նույն տեղում, թ. 18:

[80] Նույն տեղում, թ. 20-32 , շրջերես:

[81] Նույն տեղում, թ. 20:

[82] Նույն տեղում, թ. 30:

[83] ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 225 թ.30, շրջերես:

ներկայացուցիչների համաժողովից: 1981թ.-ի մայիսի 1-3 ՀԲԸՄ ցուցասրահում կազմակերպվեց քանդակագործ Վարդան Ասատուրյանի քանդակների ցուցահանդեսը, իսկ հուլիսի 30-ին Սքաթիշ Ռայթ սրահում տեղի ունեցավ մեծանուն երգչուհի Լուսինե Զաքարյանի մենահամերգը, որին ներկա էին 1600 հանդիսականներ[84]: Նույն 1981թ.-ին նշվեց նաև «Նոր օր» թերթի նախկին խմբագիր Նուբար Բերբերյանի խմբագրական գործունեության 40-ամյակը[85]:

1982թ.-ի փետրվարի 10-ի նամակով ԹՄՄ-ը Դետրոյթ է հրավիրում արձակագիր, ՀԽՍՀ վաստակավոչ լրագրող Շաքե Վարսյանին՝ մայիսի 21-23-ը մշակութային միության հիմնադրման 35-ամյակին[86] և պատգամավորական տարեկան ժողովին մասնակցելու համար: Նմանատիպ նամակով միությունը դիմում է նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին՝ խնդրելով, որ Վ. Համազասպյանն իր ողջույնի խոսքն ուղարկի միության հիմնադրման 35-ամյակի կապակցությամբ[87]: Ցավոք, պատասխան նամակում կոմիտեն տեղեկացնում է, որ Շ. Վարսյանը չի կարողանա այցելել ԱՄՆ, քանի որ նախատեսվում էր նրա այցը Բեյրութ[88]:

ԹՄՄ-ն ազգանվեր գործունեությունը շարունակեց նաև հետագա տարիներին:1982թ.-ի մարտի 5-ին ՀԲԸՄ ցուցասրահում ներկայացվեցին հայրենի նկարիչներ Արտաշես Հունանյանի և Ռոբերտ Էլիբեկյանի գործերը: 1982թ.-ի ապրիլի 26-ին Դետրոյտում նշվեց Թեքեյան մշակութային միության հիմնադրման 35-ամյակը, իսկ նույն թվականի հուլիսի 28-ին «Արշակ Տիգրանյան Վարժարանի» բակում ԱՄՆ կատարած այցի ընթացքում ելույթ ունեցավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը:

1983թ.-ի փետրվարի 6-ին ԹՄՄ-ը կազմակերպվեց երեկո՝ նվիրված խորհրդահայ գրող Սերո Խանզադյանին, որին ներկա էին շուրջ 600 հանդիսականներ[89]: Նույն թվականի նոյեմբերի 18-ին միությունը հանդիսավորությամբ նշեց Լոս Անջելեսի մասնաճյուղի հիմնադրման 15-ամյակի հոբելյանական տոնակատարությունները՝ Հայոց Եկեղեցու Արևմտյան Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե Արքեպիսկոպոս Հովսեփյանի և Ալեք Գլճյանի նախագահությամբ: Բանախոսությամբ հանդես եկավ դոկտոր Սիմոն Սիմոնյանը, իսկ համերգային հատվածում ելույթներ ունեցան երգչուհի Շաքե Գազանճյանը, Սայաթ-Նովա երգչախումբը և Ժիրայր Բանազյանը[90]:

ԹՄՄ Ամերիկայի մասնաճյուղերի գործունեությունը բարձր էր գնահատում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Այսպես միությանն ուղղված իր նամակում կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը գրում է. «Թեքեյան մշակութային միության ընդարձակածավալ գործունեությունը մի մեծ խորհուրդ ևս ունի՝ ամրապնդել ու խորացնել հայրենիք-սփյուռք կապերը, դրանով իսկ վառ պահել հայ ժողովրդի նվիրական երազները»[91]:

Երբ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի երկարամյա նախագահի պաշտոնում Վ. Համազասպյանին փոխարինում է Կարլեն Դալլաքյանը: ԹՄՄ ատենապետ Երվանդ Ազատյանը 1986թ.-ի հունվարի 20-ին շնորհավորական նամակ է ուղղում Կոմիտեի նորանշանակ նախագահին՝ հայտնելով համագործակցության պատրաստակամություն[92]:

---

[84] Նույն տեղում, թ. 31:
[85] Նույն տեղում, թ. 11:
[86] Նույն տեղում, թ. 49:
[87] Նույն տեղում, թ. 48:
[88] Նույն տեղում, թ. 45:
[89] Նույն տեղում, թ.31, շրջերես:
[90] **ՀԱԱ,** ֆ. 875, ց. 15, գ. 225 թ.32, շրջերես:
[91] Նույն տեղում, գ. 220, թ. 44:
[92] Նույն տեղում, թ.42:

1986թ.-ի փետրվարի 25-ի պատասխան նամակով Կ. Դալլաքյանը շնորհակալություն է հայտնում շնորհավորանքների համար և տեղեկացնում դեպի ԱՄՆ նախատեսվող իր այցի մասին՝ հույս հայտնելով այնտեղ հանդիպել նաև ԹՄՄ անդամներին ու ղեկավարներին[93]:

1986թ.-ի ապրիլի 13-ի նամակով ԹՄՄ ղեկավարներն իրենց գոհունակությունն են հայտնում սփյուռքում Կ. Դալլաքյանի ծավալած հայրենասիրական ու մշակութային գործունեությունից՝ միաժամանակ տեղեկացնելով, որ նրա ծրագրած այցն ԱՄՆ համընկնելու է 1986թ.-ի մայիսի 24-ին Նյու-Յորքում նախատեսվող ԹՄՄ մասնաճյուղի 12-րդ պատգամավորական տարեկան համաժողովին, որի աշխատանքներին էլ սիրով հրավիրում են մասնակցելու նաև կոմիտեի նախագահին[94]: Ինչ-ինչ պատճառներով Կ. Դալլաքյանը ներկա չի գտնվում համաժողովի աշխատանքներին, բայց 1986թ.-ի մայիսի 22-ի նամակով ողջույնի խոսք է ուղղում հավաքի մասնակիցներին, որում մասնավորապես նշում է. «Հավատացած ենք, որ ԱՄՆ-ի և Կանադայի Թեքեյան միությունը Կենտրոնական վարչության գլխավորությամբ պիտի շարունակի իր նվիրական գործունեությունը հանուն հայապահպանության: Վստահ ենք, որ առաջվա ջերմեռանդությամբ կարելին կանեք՝ զորացնելու գաղութի հայրենասիրական ուժերի համագործակցությունը, նպաստելով նրանց համախմբմանը մայր հայրենիքի շուրջ»[95]:

Իր հերթին Թեքեյան մշակութային միությունն իր մասնակցությունն է բերում հայրենիքում 1986թ.-ի մայիսի 14-22-ը անցկացված գրողների 9-րդ համագումարին: Այդ մասին տեղեկանում ենք միության վարիչ-քարտուղար Արամ Սեփեթճյանի 1986թ.-ի հուլիսի 1-ի նամակից, որում նա արտահայտում է իր ստացած դրական տպավորությունները համագումարից[96]:

Հայրենիք-սփյուռք մշակութային կապերն էլ ավելի ամրապնդելու և փոխադարձ այցելություններն աշխուժացնելու նպատակով ԹՄՄ ատենապետ Ե. Ազատյանն առաջարկում էր, որպեսզի միության հիմնադրման 40-ամյակի և Վ. Թեքեյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի օգնությամբ Երևանի կրթական հաստատություններից մեկը վերակոչվի Վահան Թեքեյանի անունով: Այդ մասին իմանում ենք նրա1986թ.-ի մայիսի 9-ի նամակից[97]: Ի պատասխան դրա՝ Կ. Դալլաքյանն ուրախությամբ հայտնում էր, որ ծանոթացել է նամակի բովանդակությանը և կփորձի միջոցներ ձեռք առնել հարցերին դրական լուծում տալու համար[98]:

Որոշ ժամանակ անց, ինչպես երևում է միության նոյեմբերի 18-ի նամակից, կոմիտեն կյանքի է կոչում այդ ծրագիրը, իսկ Ե. Ազատյանը 1986թ.-ի դեկտեմբերի 23-ի նամակում հայտնում է, որ ԹՄՄ Կանադայի Կենտրոնական վարչությունն իր 1986թ.-ի դեկտեմբերի 7–ի նիստում գոհունակությամբ է ընկալել հայրենի պետության որոշումը Երևանի թիվ 92 դպրոցը անվանակոչել մեծ բանաստեղծ Վահան Թեքեյանի անունով[99]: Միությունը պատրաստակամություն էր հայտնում նաև մի շարք հայրենասերների օգնությամբ վարժարանը ապահովել գրենական պիտույքներով ու սարքավորումներով, որի համար նրանք խնդրում էին վարժարանից իրենց ուղարկել նկարներ և որոշակի տեղեկություններ աշակերտների թվաքանակի ու մասնավոր ուսումնական պահանջների վերաբերյալ: Ե. Ազատյանը խնդրում էր նաև ԱՄՆ ուղարկել երեք-չորս արվեստագետների, որոնք պետք է մասնակցեին միության 40-ամյակի տարեդարձին:

---

[93] Նույն տեղում, թ. 41:
[94] **ՀԱԱ**, ֆ.875, ց. 15, գ. 220, թ. 34:
[95] Նույն տեղում, թ. 27:
[96] Նույն տեղում, թ. 24:
[97] Նույն տեղում, թ. 12:
[98] Նույն տեղում, թ. 31:
[99] **ՀԱԱ,** ֆ.875, ց. 15, գ. 220, թ. 32:

Այդ նպատակով ԱՄՆ են մեկնում ջութակահար Ռուբեն Ահարոնյանը, երգչուհի Մելանյա Աբովյանը և դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը, որոնք ելույթներ են ունենում երկրի մի շարք քաղաքներում[100]:

ԹՄՄ-ին օգնելու հարցում անմասն չէր կարող մնալ նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Կ. Դալլաքյանը տեղեկացնում էր, որ 1987թ.-ին նախատեսվում էր ԹՄՄ-ի «Նոր օր», «Պայքար» ու «Ապագա» թերթերի խմբագրություններին ուղարկել տարաբնույթ գրականություն, մամուլ, լուսանկարային ցուցահանդեսներ և այլն, իսկ ԹՄՄ-ի «Արշակ Տիգրանյան» դպրոցին՝ դասագրքեր, տարատեսակ գրականություն, մեթոդական ու դիդակտիկ բնույթի նյութեր, մանկական երգեր ու նոտաներ, հնարավորության դեպքում նաև՝ տեսագրություններ հայոց լեզվի ուսուցման համար, իսկ ԹՄՄ-ի ռադիոժամերի համար երգի ու պարի ձայնապնակներ, ձայնագրություններ, նոտաներ, երգարաններ, պիեսներ և պարի ուսուցման հատուկ տեսագրություններ: Նախատեսվում էր նաև, որ «Արշակ Տիգրանյան» վարժարանի աշակերտները մասնակից լինեն պիոներական ճամբարներին, իսկ ուսուցիչները՝ երևանյան դասընթացներին[101]:

1987թ.-ի փետրվարի 20-ի նամակով միության ատենապետ Ե. Ազատյանը շնորհակալություն էր հայտնում Կոմիտեի նախագահ Կ. Դալլաքյանին՝ մշակութային գործիչներ Պերճ և Սիրվարդ Ֆազլեաններին հայրենիքում լավ ընդունելության արժանացնելու և նրանց պատվին հանդիսություններ կազմակերպելու համար: Տեղեկացվում էր նաև, որ նախատեսվում է տպագրել ԹՄՄ-ի 40-ամյակի հուշամատյան, որում տեղ պետք է գտներ նաև Կ. Դալլաքյանի խոսքը[102]:

ԹՄՄ-ը հատկապես մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ էր նախապատրաստվում Վազգեն Ա կաթողիկոսի արտասահմանյան շրջագայությանը: Այդ մասին 1987թ.-ի հուլիսին միության ատենադպիր Հ. Արզումանյանը տեղեկացնում էր, որ իրենք առժամանակ հետաձգել են ծրագրված բոլոր այցելությունները Մայր Հայաստան, քանի որ սպասում են Ամենայն հայոց հայրապետի այցելելությանը Կանադա և ԱՄՆ, և որի կազմակերպչական աշխատանքներին իրենք ցանկանում էին մաս կազմել: Միաժամանակ խնդրում էին արագացնել բալետմեյստեր Ռուդոլֆ Խառատյանի այցը ԱՄՆ, որպեսզի նա օգներ միության «Նաիրի» պարախմբին՝ նախապատրաստվելու Վեհափառի այցին[103]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով 1980-ական թվականներին Թեքեյան մշակութային միության Կանադայի և ԱՄՆ մասնաճյուղերի իրականացրած ազգաշատ գործունեությունը, կարող ենք փաստել, որ ԹՄՄ-ն ԱՄՆ-ում հաջողությամբ իրականացնում էր իր ստանձնած առաքելությունը, այն է՝ ծառայել հայ ժողովրդին, պահպանել հայ մշակույթը, լեզուն և ազգային դիմագիծը: Միությունը մեծապես նպաստում էր նաև հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանն ու աշխուժացմանը: Այդ նպատակով ԹՄՄ-ն ակտիվորեն համագործակցում էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

---

[100] Նույն տեղում, թ. 33:
[101] Նույն տեղում, թ.10:
[102] **ՀԱԱ,** ֆ.875, ց. 15, գ. 220, թ. 35:
[103] Նույն տեղում, թ. 8:

ACTIVITIES OF BRANCHES OF THE TEKEYAN CULTURAL ASSOCIATION IN THE UNITED STATES AND CANADA IN THE 1980S.

ANI KHACHATRYAN
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Chair of the History of Armenia, Ph.D. Student;
Union of Young Scientists and
Specialists of Artsakh (UYSSA), member,
Yerevan, Republic of Armenia

The purpose of this article is to present and illustrate the activities of the USA and Canada Tekeyan Cultural Association's branches in the 1980s.

Our task is to study the main directions of the Tekeyan Cultural Association based on rich archival documents, timely correspondence, and other scientific materials, namely the work, that was done for the preservation of the Armenian identity in the Diaspora during 1980s, the cultural and educational activities, as well as to emphasize their effectiveness and their significance in the life of the Armenian Diaspora.

During the research various methods (analysis, synthesis, the principle of history and juxtapose of archival documents and other materials) were used.

The results of the research allow to conclude that durng the period under the research the Tekeyan Cultural Association was successfully carrying out its mission: to serve the Armenian nation in the Diaspora, Contribute to the preservation of Armenian culture, language and national identity among Armenian communities in the USA and Canada. Through its activities, the Association greatly contributed to the strengthening and development of Homeland-Diaspora cooperation.

Key words: *The Committee for Cultural Relations with the Diaspora, Homeland-Diaspora cultural relations, the Tekeyan Cultural Association, Canada, Los Angeles, Homeland, Diaspora, preservation of the Armenian identity.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ ФИЛИАЛОВ КУЛЬТУРНОЙ АССОЦИАЦИИ ТЕКЕЯН В США И В КАНАДЕ В 1980-х гг.

АНИ ХАЧАТРЯН
аспирантка кафедры армянской истории
Армянского государственного педагогического университета
им. Хачатура Абовяна,
Член Объединении молодых ученых и
специалистов Арцаха (ОМУСА),
г. Ереван, Республика Армения

Целью данной статьи является представить и проиллюстрировать деятельность филиалов Культурной Ассоциации Текеян в США и в Канаде в 1980-ые годы. Наша задача состоит в том, чтобы на основе богатых архивных документов, корреспонденции того времени и других представляющих интерес научных материалов изучить основные направления деятельности Культурной Ассоциации Текеян, в частности, огромную работу, которая была направлена на сохранение армянской идентичности в Диаспоре в 1980-х гг.,

представить культурно-просветительскую деятельность, которая велась усилиями Ассоциации, а также отметить ее прямое влияние на качество отношений между Родиной и Диаспорой.

В ходе исследования мы использовали множество методов, таких, как анализ, синтез, принцип историчности и сопоставление архивных документов и других материалов.

Таким образом, мы можем сделать вывод о том, что в 1980-е годы Культурная Ассоциация Текеян успешно выполняла свою миссию, служила армянскому народу на чужбине, способствовала сохранению армянской культуры, языка и национальной самобытности среди армянских общин США и Канады. Своей деятельностью Ассоциация внесла большой вклад в укрепление и развитие сотрудничества между Родиной и Диаспорой.

Ключевые слова: *Комитет по культурным связям с армянами Диаспоры, филиалы Культурной Ассоциации Текеян, Канада, Лос-Анджелес, культурные отношения между Родиной и Диаспорой, Диаспора, Родина, сохранение армянской идентичности.*